ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021. թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ և 9-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով, որ ժամկետը լրանալու հիմքով դադարել է Պալատի երիտասարդական խորհրդի անդամ Նարեկ Սահակյանի (արտոնագիր՝ համար 3230) լիազորությունները,

նկատի ունենալով խորհրդի անդամի թափուր մնացած տեղը 2025 թվականի ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից համալրելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով փաստաբան Արթուր Սարոյանի համաձայնության առկայությունը,

ՈՐՈՇԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամներ նշանակել փաստաբան **Արթուր Սարոյանին (արտոնագիր՝ համար 3986)**՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

9 հունվար 2026թ.
թիվ 2-Ա
ք. Երևան